

## Մրցույթի հայտարարություն

«Սյունիքի մարզի «Աղվանիի հիմնական դպրոց» ՊՈԱԿ  
ուսումնական հաստատության անվանումը

տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար

«Կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված՝ պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի 6-րդ և 7-րդ կետերի համաձայն՝ «Աղվանիի հիմնական դպրոց», «Տանձավերի միջնակարգ դպրոց» և «Վերին Խոտանանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ների կոլեգիալ կառավարման մարմնի՝ միացյալ խորհուրդը հայտարարում է մրցույթ «Աղվանիի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնի թափուր տեղն զբաղեցնելու համար:

1. Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1) «Քաղաքացիությունը.

2) ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր):

2. Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝

1) դիմում՝ հաստատության խորհրդի նախագահի անունով.

2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը.

3) հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը.

4) տվյալ հաստատության զարգացման ծրագիրը թղթային և էլեկտրոնային տարբերակներով.

5) ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են «Սյունիքի մարզի «Աղվանիի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում 2022 թվականի մարտի 16-ից մինչև ապրիլի 5-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից մինչև ժամը 15:30-ը, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային տոնական և հիշատակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2022 ապրիլի 19-ին՝ ժամը 14:00-ին, «Սյունիքի մարզի «Աղվանիի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում, Հասցեն՝ Կապան համայնք գյուղ Աղվանի

Տեղեկությունների համար կարող ենք զանգահարել 098833960, 093644059  
հեռախոսահամարներով

roma.zaqaryan.89@mail.ru